



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**  
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1  
 (0223) 2-23-45, info@hrazdan.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

27 հուլիսի 2017 թվականի N 650

**ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈԴԱՄԱՍՆ  
 ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ բաժնի պահանջների, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67 հոդվածի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 13-ի N 136 և 2014 թվականի մայիսի 15-ի N63 որոշումները, 2017 թվականի հունիսի 06-ի N58 որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետը և 2017 թվականի հուլիսի 21-ի հողամասն աճուրդով վաճառելու մասին N27 արձանագրությունը.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ**

1. Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 4-րդ փողոց թիվ 19/3 հասցեում գտնվող 41.0քմ մակերեսով հողամասն աճուրդային կարգով օտարել Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 26 շենքի թիվ 6 բնակարանի բնակիչ Գարիկ Արամի Դավթյանին ավտոտեխսպասարկման կետ կառուցելու նպատակով:
2. Աճուրդով ձեռքբերված 41.0քմ մակերեսով հողամասի համար կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր: Պայմանագրի կետերի կատարման հսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:
3. Պարտավորեցնել Գարիկ Դավթյանին ավտոտեխսպասարկման կետի շինարարական աշխատանքները սկսել հաստատված նախագծային փաստաթղթերի և շինարարության թույլտվության առկայության դեպքում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

*(Handwritten signature)*

**ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ**

